ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻԻ ԾՆՆԴԱՎԱՅՐԸ, ՏԱՐԻՔԸ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԸ

Պրոֆ. Ա. Դ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Իսրայել Օրին հայ ժողովրդի ազատագրական շարժումների ականավոր դեմքերից մեկն է։ Նա առաջին հայ դիվանագետն է, որը համարձակ վերանայեց հայ ազատագրական շարժման քաղաքական կողմնորոշումը, ճշտեց այդ շարժման ուղիները, մեծ Ռուսաստանի մեջ տեսավ հայ ժողովրդի փրկությունը և նրա հետ կապեց հայերի ազատագրական հույսերն ու ակնկալությունները։

Իսրայել Օրին ռուսական հողի վրա առաջին անգամ ոտք դրեց 1701 թ., դիվանագիտական բանակցությունների մեջ մտավ ռուսական արքունիքի հետ և հիմք դրեց հայ-ռուսական քաղաքական հարաբերություններին։

Օրիի անձնավորության հետ կապված և ճշտման կարոտ խնդիրներից մեկը նրա ծննդավայրի հարցն է։ Մեզ ծանոթ տվյալների հիման վրա փորձենք քննության առնել այն։

Կարմելյան քարոզիչ Ուկոնին 1709 թ. ապրիլի 2-ին Հավատի տարածման Հռոմի ժողովին ուղարկած իր զեկուցագրում Օրիի ծննդավայրն է համարել «Գիլանը»։ Նա այդ զեկուցագրում գրել է. «Պետք է նաև սույն նամակով իմացնեմ Ձեր Գերապայծառության, որ հայ անձ մը և Պարսից շահին հպատակ, Գիլանի նահանգը ծնած (ընդգծումը մերն է—Ա. Ա.)... տեղս ժամանեց Պապին դրոշով՝ ինքզինքը իբր Պապին դեսպանը ներկայացնելով... իր անունը Իսրայել Օրի է և կրսվի թե ինքը զինվոր եղած է Ֆրանսայի մեջ»[1]։ Կարմելյան քարոզիչի այս տեղեկությունը մտացածին է։ Ըստ երևույթին, նրա ծանոթ վայրը մետաքսի վաճառքով հայտնի Գիլանն է եղել, ուր և հարմար է համարել տեղադրել Օրիի ծննդավայրը։

Կրուշինսկին Օրիին համարում է Ղափանցի. «Այդ ժամանակ (1708 թ. վերջերը),— գրում է նա,— մի դեսպան հասավ Շամախի, որը Մոսկվայի ցարի կողմից գնում էր պարսկական արքունիք։ Այս ջենտլմենտի անունն էր Իսրայել Օրի... Նա ծննդով Պարսկաստանի Ղափանցի (վայրից) էր (kapanlu)»[2]։ Նույնը կրկնել են անգլիացի Հանվեյը և իտալացի կարմելյան կրոնավոր Ֆրա Լեանդրը։ Վերջինս գրում է. «1708-ին վերջերը ի Շամախի հասավ ռուսաց ձարին կողմանե դեսպան մը, որուն անունն էր Իսրայել Օրի, ազգավ հայ և ծննդյամբ Ղաբանլուցի, որ Պարսկաստանի փոքրիկ գյուղ մըն է»[3]։

Օրիի ծննդավայրը Ղափանը համարելու այս վարկածը հանգամանորեն քննության է առել Աշ. Հովհաննիսյանը և հանգել է հետևյալ եզրակացության. «...սխալված կլինեինք, եթե, ելնելով Կրուշինսկու ինքյան արժեքավոր վկայությունից, Օրիի ծննդավայրը որոնելու լինեինք ներկայիս Ղափանի շրջա-

---

[1] *Հ. Քյուրտյան, Իսրայել Օրի. Վենետիկ. 1960, էջ 172։*
[2] The History of the Revolution of Persia, Father Krusinski, Dublin. 1719, *էջ 127։*
[3] *«Բազմավեպ», 1914, № 1, էջ 30։*

նում... Ղափան անունը երբեմն ուներ նաև լայն իմաստ՝ ընդգրկելով Մեծ և Փոքր Սյունիքը, ասել է՝ Կուր և Արաքս գետահովիտների մեջ ընկած ամբողջ այն լեռնաշխարհը, որ Ալիշանը նշում է «Ղարաբաղ» տեղանունով»[4]։

Աշ. Հովհաննիսյանի այս կարծիքը հաստատող փաստ կարող ենք գտնել Ստեփանոս Շահումյանցի թելադրանքով Ղուկաս Սեբաստացու գրի առած «Ընտիր պատմութիւն Դաւիթ բէգին և պատերազմացն Հայոցն Խափանու» երկում։ Այստեղ «Խափան» տեղանունը գործ է ածված ողջ Սյունիքի համար հավաքական իմաստով։

Օքսֆորդի Բոդլեյան գրադարանի № 53 ձեռագրի հիշատակագիր Սարգիսն իր թողած հիշատակարանում գրչության վայրի մասին գրում է. «Ես Սարգիս գրիչս եմ ի յերկրէն Ղափանայ, ի գեղջէն Գորիսոյ, որ աղդմանէ չարին փախեալ եկաք բնակեցաք ի գէօղս Բարկիս (—ի յերկիրն Գեղամայ), և աստ գրեցաք զսուրբ աւետարանս ի թվիս Հայոց ՌՃԶ (=1657)»[5]։ Գորիսը՝ Զանգեզուրի հանրածանոթ այս բնակավայրը, ինչպես տեսնում ենք, համարվել է Ղափանի շրջանի գյուղերից մեկը։ Ժամանակին այսպես է ճանաչվել Ղափանը։ Անհիմն չէ պատմարան Մ. Չամչյանը, երբ խոսելով Ղափանի մասին, գրում է. «...և ոչ թողին զոք ի թշնամեաց յաշխարհին Սիւնեաց և Արցախոյ, որոց սահմանք Ղափանու աշխարհ կոչին յոմանց»[6]։

Բաֆֆին Օրիի ծննդավայրն է համարել Հնդկաստանը. «Ղարաբաղի մելիքները,— գրել է նա,— դեռ 1701 թվականին ուղարկեցին Պետրոս Մեծի մոտ որպես պատգամավոր Իսրայել Օրի անունով հնդկաստանցի հային»[7]։ Որտեղի՞ց է նա քաղել այդ տեղեկությունը, մեզ հայտնի չէ։ Համենայն դեպս, մեր ծանոթ պատմական աղբյուրներով այն չի ճշտվում։ Անհավանական չէ, որ մեծանուն վիպասանը Օրիին շփոթած լինի հայ ժողովրդի ազատագրական շարժման մի այլ ականավոր գործիչի՝ Հովսեփ Էմինի հետ, որի գործունեության վայրը իսկապես Հնդկաստանն է՝ նրա Կալկաթա ծովափնյա քաղաքը։

Բանասեր Ե. Գեղամյանցը Օրիի ծնողներին արցախեցի է համարում, որոնք իբրև թե XVIII դարում Արցախի կալվածատեր մելիքներից են եղել։ Նշելով էջմիածնի գաղտնի ժողովում Օրիի հոր՝ Իսրայելի պատգամավոր ընտրվելու փաստը, նա այդ կապակցությամբ անդրադառնում է Օրիի ծննդավայրին. «Ընտրված աշխարհականներից մեկն էր Իսրայել անունով մելիքը։ Սակայն նա, մասամբ ծերության, մասամբ էլ խուշենում ունեցած իր կալվածից հեռանալու պատճառով (ընդգծումը մերն է—Ա. Ա.) հրաժարվեց, բայց իր փոխարեն Օրի անունով որդուն նշանակեց»[8]։ Պռոշյան իշխանական տունն Արցախում, իրոք, տիրույթներ ունեցել է, բայց այդ եղել է շատ վաղուց՝ XIII դարում, իսկ XVIII դարում Իսրայելի մելիք լինելու և Արցախում կալվածք ունենալու մասին մեզ ոչինչ հայտնի չէ։ Գեղամյանցը թյուրիմացության մեջ է. XIII—XIV դդ. Արցախում Պռոշյանների ունեցած տիրակալական իրավունքները նա մեքենայորեն տեղափոխել է XVIII դար։

---

4 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գ. Բ, Երևան, 1959, էջ 230։

5 Տիրայր Եպիսկոպոս, Ցուցակ ձեռագրաց Օքսֆորդի Բոդլեյան գրադարանի, ձեռ. № 53 (հմմտ. Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, գ. Բ, էջ 235)։

6 Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. III, Վենետիկ, 1786, էջ 788։

7 Բաֆֆի, Երկեր, հատ. X, Երևան, 1959, էջ 180։

8 Ե. Գ. Գեղամյանց, Իսրայել Օրին և իր բաղաքական ծրագիրը, Բաքու, 1914, էջ 10։

Պատմաբան Հ. Աստուրյանը հայ ժողովրդի պատմության իր դասընթացում Օրիին համարել է զարաբաղցի, որը Հնդկաստանում իբրև թե զբաղվել է առևտրով, բավականին հարստություն ձեռք բերել և նվիրվել հայ ժողովրդի ազատագրության գործին. «Վերջինս (այսինքն՝ Իսրայել Օրին),— գրել է նա,— ծնունդով Գարաբաղցի հայ մ'էր, որ Հնդկաստանի մեջ լավ դրամ վաստակած էր վաճառականությամբ և ճշմարիտ հայրենասիրության ոգի մը կրկրեր»[9]։ Աստուրյանի այս տեղեկությունը մտացածին է։

Լեոն «Խոջայական կապիտալի» մեջ Օրիի ծննդավայրն է համարել Հին Նախիջևանի Շահապոնք ավանը։ Քանի որ Շահապոնքը հայ ունիթոռների կենտրոնն է եղել, ուստի, նրա կարծիքով, Օրին կաթոլիկ դավանանքին հարող ունիթոռ է և ծննդյամբ այնտեղից. «Արդ՝ ընդունելով Շահապոնք ավանը կամ նրա մերձակա մի այլ գյուղ իբրև ծննդավայր Օրիի,— գրել է նա,— մենք դրա հետ ձեռք ենք բերում և երկու կարևոր իրողություններ, որոնք կարող են բացատրել այդ մարդու կյանքի մի քանի հանգամանքները։ Առաջինն այն է, որ XVII դարում Շահապոնքը հայ կաթոլիկների կամ ունիթոռների գլխավոր կենտրոններից մեկն էր. և ամենայն հավանականությամբ ինքն Օրին էլ մեկն էր այդ ունիթոռներից»[10]։ Հետագայում նա իր այդ կարծիքը վերանայել է «Հայոց պատմության» մեջ։ «Պռոշյան տոհմը սեփական կալվածներ ուներ Վայոց ձորում (Դարալագյազ),— գրել է նա,— և նրա սահմանակից Ճահուկ գավառում։ Հավանականաբար, այս տեղերից Պռոշյանների մի հատված բնակություն հաստատեց Հափանի գյուղերից մեկում, որի անունը մեզ անհայտ է մնում։ Այդ անհայտ գյուղերից էր, ամենայն հավանականությամբ, Իսրայել Օրին»[11]։ Լեոյի այս ենթադրության հետ դժվար է համաձայնվել։ Անկարելի է մտածել, որ ազատագրական հոգսերով տարված հայ քաղաքական բարձր շրջանները և լուսավորչական եկեղեցու բարձրաստիճան հոգևորականությունը էջմիածնում գումարված գաղտնի ժողովին կարող էին մասնակից դարձնել հայ կաթոլիկի, և նրա երիտասարդ որդուն լիազորել Եվրոպա մեկնել՝ դիվանագիտական բանակցություններ վարելու։ «Ինքյան իսկ անհավանական է,— իրավացիորեն Լեոյին առարկում է Աշ. Հովհաննիսյանը,— որ XVII դարում հազիվ միայն 40 տուն հայ-կաթոլիկ և մոտ հարյուր տուն մահմեդական բնակչություն ունեցող Շահապոնքը, այսինքն՝ գրեթե մահմեդական մի գյուղ, եղած լիներ Օրիի անվանի հարազատների մղած պայքարի հանգրվանը և ի վերջո նույնիսկ մասնակցած էջմիածնի սակավամարդ խորհրդաժողովին»[12]։

Աշ. Հովհաննիսյանը հակված է Օրիի ծննդավայրը համարելու Սիսիանի շրջանի Սիսիան գյուղը. «Հավանորեն Սիսիանն է հենց XVII դարի մեծ Ղավանի կամ Նախիջևանի խանության այն մհալը, ուր պիտի որոնենք Օրիի ծննդավայրը»[13]։ Այս հարցում նրա հիմնական կռվաններից մեկը հայ առևտրական Եղիա Մուշեղյանի «Անձկութիւն» խորագրով աշխատությունն է եղել։ Մուշեղյանը, խոսելով իր գործընկեր Պոռեկարի մասին, նշում է, որ 1707 թ., Օրիի դեսպանության ժամանակ, նա մտած է եղել նրա շքախմբի մեջ. «Վերոյ յիշատակեալ Հօնօռէ Պոռէկարն,— գրում է նա,— էր ազգաւ Ֆրանցիզ, գա-

9 Հ. Աստուրյան, Պատմություն հայոց, Բուենոս-Այրես, 1947, էջ 353։
10 Լեո, Խոջայական կապիտալ, Երևան, 1934, էջ 177։
11 Լեո, Հայոց պատմություն, հատ. III, գ. II. Երևան, 1973, էջ 31։
12 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, գ. Բ, էջ 240—241։
13 Նույն տեղում, էջ 238։

ւառէն Մառչիլիու։ Սայ ընդ սիսիանցի Իսրայէլ Օռի դեսպանին (ընդգծումը մերն է— Ա. Ա.) եկել էր Ֆրանկիստանու և ծառայէր նմայ ի գործս տնօրէնութեան»[14]։ Մուշեղյանի այս տեղեկության հիման վրա Աշ. Հովհաննիսյանը հնարավոր է համարել, որ Օրիի ծննդավայր գյուղը եղած լինի հենց Սիսիանի շրջանի կենտրոն Սիսիան գյուղը. «Հնարավոր է,— գրել է նա,— որ Մուշեղյանի հաղորդածը պարունակում է իր մեջ նույնիսկ ավելի նեղ մի իմաստ։ «Սիսիանցի» հատկացուցիչը կարող էր նշանակել ոչ միայն Սիսիանի մհալից, այլև այդ մհալի Սիսիան գյուղից, որը ժամանակին հանդիսացել էր Սյունյաց մելիքների և յուղբաշիների նստավայրերից մեկը»[15]։

Դժվար է համաձայնվել Աշ. Հովհաննիսյանի այս կարծիքի հետ հետևյալ պատճառով։ Նախ՝ պատմական տեղեկություններ չկան, որ Պռոշյան իշխանական տունը որևէ ժամանակ տիրույթներ ունեցած լինի ներկայիս Սիսիանի շրջանում։ Ապա՝ Եղիա Մուշեղյանը «սիսիանցի» ասելով նկատի է ունեցել ոչ թե ինչ-որ գյուղ, այլ՝ շրջան, տվյալ դեպքում՝ Սիսիանի շրջանը, որը միջին դարերում Սիսվան կամ Սյունիք անունով բավական լայն ընդգրկում է ունեցել. նրա վարչական կազմում, ըստ Շիրակացու «Աշխարհացույցի», գտնվել է 12 գավառ, այդ թվում՝ Երնջակը, Ճահուկը, Վայոց ձորը, Գեղարքունիքը և ուրիշներ[16]։ Օրբելյանի գյուղացանկի համաձայն Սյունիքի մեջ մտել են հետևյալ 14 գավառները՝ Ծղուկ, Այլախ, Վայոց ձոր, Գեղաքունի, Սոթք, Աղահեջ, Հաբանդ, Բաղք, Քաշունիք, Կովսական, Արևիք, Զորք, Երնջակ և Ճահուկ[17]։

Որ Սիսիանը չէր կարող Օրիի ծննդավայրը լինել, այդ որոշակի երևում է Պֆալցի կուրֆյուրստին Օրիի հաղորդած այն տեղեկությունից, որ Էջմիածնից ճանապարհվելով դեպի Սյունիք, ճանապարհին կանգ է առել իր ծննդավայր գյուղում, իսկ հաջորդ օրը, շարունակելով ճանապարհը, հասել է Անգեղակոթ[18]։ Աշ. Հովհաննիսյանը կարծում է, թե Էջմիածնից դեպի Անգեղակոթ գնալու համար ուղևորը նախ պիտի անցնի Սիսիան ավանը, ապա մի քանի ժամ ճանապարհը շարունակելով հասնի Անգեղակոթ։ Սյունիքի այդ երթուղու հետ ծանոթ ամեն մեկը գիտի, որ այդպես չէ։ Բացի այդ, Սիսիան ավանից Անգեղակոթ հեռավորությունը ոչ թե մի քանի ժամվա ճանապարհ է, այլ ընդամենը կես ժամվա՝ ձիով։

Մեր կարծիքով, Օրիի ծննդավայրի մասին եղած կարծիքներից համոզեցուցիչը ականավոր բանասեր Գարեգին Հովսեփյանի հայտնած կարծիքն է։ Նա Օրիի ծննդավայրն է համարում Վայոց ձորի Մարտիրոս գյուղը։ Անհրաժեշտ ենք գտնում քննարկել Հովսեփյանի առաջ քաշած կովանները, ինչպես և մեր կողմից հրապարակել նոր փաստեր։

---

14 Հ. Ոսկյան, Եղիա Աստվածատրյան Մուշեղյան և իր գրական արտադրությունը (տե՛ս «Հանդես ամսօրյա», 1927, էջ 38։ Զեռագիր Վիեննայի մատենադարանի № 980, թ. 225բ—226ա)։ Մենք օգտվել ենք տվյալ ձեռագրի մանրաժապավենից, որը ստացել ենք Վիեննայի Մխիթարյաններից։

15 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, գ. Բ, էջ 238։

16 «Անանիա Շիրակացու մատենագրությունը», Երևան, 1944, էջ 350։

17 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 509—523։

18 Г. А. Эзов. Сношения Петра Великого с армянским народом, документы, СПб. 1898, վավ. № 11, էջ 52 (այսուհետև՝ Эзов, Сношения)։

Հովսեփյանի հիմնական կռվանն այն է, որ Օրին եղել է Պռոշյան իշխանական տան շառավիղներից մեկը, իսկ Պռոշյանների տիրույթը, ինչպես հայտնի է, գտնվել է Վայոց ձորում։ Որ ժամանակակիցները Օրիին ճանաչում էին որպես Պռոշյան, այդ երևում է մի շարք վավերագրերից։ Նշենք դրանցից մի քանիսը։

Մելիքները 1699 թ. ապրիլի 29-ին Պապին ուղարկած գրության մեջ հայտնել են նրան. «Մեք ընտրեալ էաք զպարոն Իսրաէլն՝ մեր մեծատան որդի Հայաստանեաց, ի տօհմէ Պռոշ իշխանի, և ինք չի կարաց գալ վասն անօրինաց, և պատճառ այլևայլ չի լինելոյ աղագաւն։ Եւ ընտրեաց փոխարէն զիւր որդին Իսրաէլ Օրին, և մենք խապուլ արաք, որ դա հետ Յակոբ կաթողիկոսին»[19]։

Մելիքների՝ Օրիին տված հավատարմագրում նշվում է, որ Օրին «...ծագում է Պռոշ իշխանի պայծառ ընտանիքից» (qui ducit originem ex familia principum Broschensium)[20]։ Ասվում է նաև, որ Օրին, իր ազնիվ նախնիների օրինակով, 19 տարի շարունակ հետամուտ է եղել հայ ժողովրդի ազատագրության գործին, և որ այդ տան երեք հայրենասեր ներկայացուցիչներ նահատակվել են թշնամիների ձեռքով։

Նույն մելիքները 1699 թ. ապրիլի 29-ին Պետրոս I-ին ուղարկած գրության մեջ Օրիին ներկայացրել են որպես Պռոշյան իշխանական տոհմի զավակ. «Դարձեալ մենք յառաջ ընտրեր էաք Հայաստանեացս մեծատունն զպարոն Իսրաէլն ի տօհմէ Պռոշ իշխանի որ գան առ ձեր թագաւորութեանն, և ի ահէ անօրինացն ոչ եղև գալ ինք, իւր փոխարէն զիւր որդին առաքեց, մենքլ խապուլ արինք»[21]։

Ստեփանոս Ռոշքան, որն անձամբ հանդիպում է ունեցել Օրիի հետ և թարգմանել է մելիքների՝ Պապին ուղարկած գրությունը, Օրիի մասին հետևյալն է գրել. «Իսրայէլ Օրին Պերոշ իշխանի որդին, ընդ իւր բերեալ զՄինաս վարդապետն Խարբերդցի եկն ի Հռոմ...»[22]։

Որ Օրիի հայրն Անդրկովկասի ազատագրական շրջաններում ճանաչված մեկն է եղել, այդ որոշակի երևում է Մոսկվայում 1701 թ. հուլիսի 13-ին Դեսպանական վարչությունում (Посольский приказ) Օրիի արած հայտարարությունից. «Հույս ունի ինքը,— ասել է նա,— որ Արշիլ թագավորին ևս հայտնի է հայերի նախկին դիտավորությունը (խոսքն ազատագրական շարժումների մասին է—Ա. Ա.), թե ինչպես դեռ իր հայրը՝ Իսրայելը, 23 տարի առաջ նույն գործի համար ուղարկված է եղել և Յարգրադից (=Կ. Պոլսից) պատերազմի պատճառով վերադարձել է, նմանապես նրան հայտնի պիտի լինի Իսրայելի ընտանիքը (ընդգծումը մերն է—Ա. Ա.)։ Եվ ինքը կամենում է տեսակցել Արշիլի հետ, եթե այդ բարեհաճի բոյարին Ֆեոդոր Ալեքսեևիչը (այսինքն՝ պետական կանցլեր Գոլովինը—Ա. Ա.)»[23]։

Եթե Արշիլին հայտնի չլիներին էջմիածնի գաղտնի ժողովում ընտրված պատգամավորության ժամանումը Վրաստան և նրա վարած բանակցությունը-

---

19 Հ. Քյուրտյան, նշվ. աշխ., էջ 34։

20 Эзов, Сношения, վավ. № 3, էջ 6։

21 Նույն տեղում, վավ. № 6, էջ 17։

22 «Ստեփանոսի Ռոշքայ, ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցականք», Վիեննա, 1964, էջ 190։

23 Эзов, Сношения, վավ. № 42, էջ 84։

ները վրացական քաղաքական շրջանների հետ, կամ եթե Արշիլը անձամբ ճանաչած չլիներ Օրիի հորը որպես հասարակական-քաղաքական գործչի, անկարելի է կարծել, որ Օրին կարող էր համարձակվել նման հայտարարությամբ հանդես գալ արքունիքի Դեսպանական վարչությունում, քանի որ այդ նույն ժամանակ Արշիլը գտնվում էր Մոսկվայում և դժվար չէր ստուգել նրա հայտարարության հավաստիությունը։

Վերջապես, Աղվանից Եսայի կաթողիկոսը, Պետրոս Մեծին 1721 թ. ապրիլի մեկին ուղարկած գրության մեջ խոսելով Օրիի անցյալ գործունեության մասին, նրան անվանել է «մեծաղգի» և «մելիքզադայ». «Ահա այս ԻԲ (=22) ամ աւելի է,— գրել է նա,— որ Նահապետ մեծ պատրիարգն Վաղարշապատու իւր արքեպիսկոպոսօք և ազատ որդովք և ես նուաստս իմ եպիսկոպոսօք և մելիքովք այսմ խնդրանաց և խորհրդեան կամք մեր մեծաղգի և մէլիքզատայ և ձեր մեծութեան էլչի Իսրայել Օռին...»[24]։ Անկարելի է, որ Եսայի կաթողիկոսը չիմանար Օրիի մասին և առանց լավագիտակ լինելու, նրան մեծաղգի մարդկանց շարքը դասեր։ Ճիշտ է, Եսայի կաթողիկոսը չի ասում, թե Օրին Պռոշյան իշխաններից է, սակայն նրա օգտագործած «մեծաղգի» և «մելիքզադե» որակումները իշխանից ցածր ազնվական աստիճան չեն ցուցանշում։

Այսպիսով, վերը բերված տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Մելիք Իսրայելը ազատագրական շրջանակներում ճանաչված է եղել որպես Պռոշյան իշխանական տան շառավիղ։

Պատմական գիտությունների դոկտոր Պ. Հարությունյանը քննադատել է Գ. Հովսեփյանին, Լեոյին և նրանց կարծիքը բաժանող մյուս պատմաբաններին այն բանի համար, որ նրանք Օրիին Պռոշյան իշխանական տան շառավիղ են համարել[25]։

Չենք ժխտում, որ Օրին կարող էր և սերված չլիներ Պռոշյաններից, ազնվական չլինել և իրեն Պռոշյանների հետ կապելով նպատակ ունեցած լիներ քաղաքական ասպարեզում դիրք և հեղինակություն շահել։ Պատմության մեջ նման օրինակներ ունենք։ Սակայն այդ դեպքում ինչպե՞ս գնահատել ժամանակակից մելիքների, Եսայի կաթողիկոսի, Արշիլ թագավորի, Ռոշքայի և այլոց վկայությունները։ Կարո՞ղ ենք նրանց բոլորին համարել կեղծարարներ։ Վերջապես, չպետք է կարծել, թե քաղաքական և եկեղեցական բարձր շրջանները մասնակից չէին ժողովրդի ազատագրական շարժումներին և այդ գործի բանագնացն անպայման պիտի լիներ ոչ ազնվական մեկը։

Բոլորովին սխալ ենք համարում Հ. Քյուրտյանի՝ Օրիին տված գնահատականները՝ վերջինիս ծագման հարցը քննելու կապակցությամբ[26]։

Պռոշյանների տիրույթը, ինչպես ասացինք, գտնվել է Վայոց ձորում։ Մեր հայտնի չեն փաստեր, որ Պռոշյանները հաստատված լինեին Հայաստանի մի այլ շրջանում։ Հայտնի է նաև, որ Մարտիրոսը Վայոց ձորի այն գյուղերից մեկն էր, որի հետ սերտորեն կապված է եղել Պռոշյանների տունը. այն եղել է նրանց ամառանոցը։ Բավական է ասել, որ Մարտիրոս գյուղի շրջակայքում մեզ հայտնի է պատմական չորս հուշարձան Պռոշ իշխանի անվան

---

24 Ա. Հովհաննիսյան, Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը, Էջմիածին, 1921, հավելված, վավ. № 14, էջ XXXIII։

25 П. Т. Арутюнян, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, М., 1954, էջ 143—144։

26 Հ. Քյուրտյան, նշվ. աշխ., էջ 22։

հիշատակությամբ, չենք խոսում դեռ այդ տան մյուս ներկայացուցիչների մասին, որոնց անունները հիշատակված են գյուղում եղած հուշարձանների արձանագրություններում։ Պռոշ իշխանի անունը կա Ս. Աստվածածնի վիմափոր եկեղեցու հարավային և արևմտյան պատերի, վիմափոր եկեղեցիների դիմաց՝ գետակի ձախ ափի բլրակի վրա գտնվող դերեզմանատան խաչքարի, գյուղամիջի հուշարձանի պատվանդանի, Աստվածածնի եկեղեցու մուտքի քարի վրա։ Պռոշյանների անվան հիշատակությամբ արձանագրություններ կան Մարտիրոսի հարևան Գյումուր և Փաշալու գյուղերում[27]։ Պատահական չէ, որ Հովսեփյանը, ձեռնարկելով Պռոշյաններին նվիրված իր հետազոտությունը, փաստական նյութերի տվյալների հիման վրա Օրիի ծննդյան վայրն է համարել Մարտիրոս գյուղը։

Իր՝ Օրիի պատմածից հայտնի է, որ էջմիածնից դեպի Անգեղակոթ գնալու ճանապարհին նա կանգ է առել հայրենի գյուղում, գիշերել է քրոջ և եղբայրների մոտ՝ գաղտնի պահելով իր ինքնությունը։ Նա հագած է եղել լեհ սպայի հագուստ և կապած Արևելքում անսովոր փողկապ։ Քույրը և եղբայրները, տեսնելով օտարականին, հետաքրքրվել են նրանով։ Անհրաժեշտ ենք համարում Օրիի զեկուցագրից բերել այն հատվածը, որն անմիջապես վերաբերում է նրա հայրենի տանը և քրոջ հետ ունեցած զրույցին։

«Քույրս,— պատմում է Օրին,— տեսնելով որ եկողը մի օտարական է, հարցրեց, թե՝ «Որտեղացի է նա»։

— Ես ասացի՝ Երևանից։

— Նա ինձ ասաց, թե՝ Այս երկրում ամենևին այս տեսակ շորեր չեն հագնում։

— Պատասխանեցի թե՝ Գալիս եմ Եվրոպայից։

— Այդ բանը նրան ուրախացրեց, և նա հարցրեց՝ Ո՞ր երկրից։

— Ես անվանեցի բոլոր տեղերը, բայց նա ոչ մեկի մասին ծանոթություն չուներ, իսկ երբ ամենից առաջ տվի Ֆրանսիայի և Փարիզի անունները, նա սկսեց լաց լինել և ինձ հարցրեց՝ «Ջե՞մ տեսել արդյոք մի երիտասարդ հայի այդ երկրներում։

— Հարցրի թե՝ քանի՞ ժամանակ է, որ նա հեռացել է այստեղից։

— Եվ նա պատասխանեց թէ՝ Մոտավորապես քսան տարի է։

— Ես նրան ասացի թե՝ Քսան տարվա ընթացքում մի մարդ չի կարող միշտ երիտասարդ մնալ։ Բայց այնտեղ ես տեսա,— ասացի,— մոտ քառասուն տարեկան մի մարդ, որն ինձ ասաց թե՝ նա այս նահանգից է։

— Հետո նա հարցրեց թե՝ Ի՞նչ ձևի մարդ էր նա և ի՞նչ ազգության էր։

— Պատասխանեցի. Տիկին, տեսքով նա ինձ նման է, նա թուխ է, ինչպես ես։

— Նա ասաց. Ո՛չ, նա ավելի բարձրահասակ էր, քան դուք և այդքան թուխ չէր։

— Ինչ վերաբերում է ազգանունին, ես լսել եմ նրա խոսքը, թե նա Իսակ կամ Օրի տոհմից է։

— Դուցե Իսրայե՞լ։

— Ես ասացի նրան. Այո՛, Իսրայել։

---

27 «Դիվան հայ վիմագրության», պրակ III, կազմեց՝ Ս. Գ. Բաբխուդարյան, Երևան, 1967, էջ 179—191։

— Նա ասաց. Եթե այս ճիշտ է, դու իմ եղբայրն էս։

Միաժամանակ նա լաց լինելով դուրս գնաց և ներս բերեց իմ եղբայրներին, և մի րոպե տունը այնպես լցվեց մարդկանցով, որոնք ուզում էին նորություններ իմանալ այդ կողմից, որ ես չգիտեի՝ ում պատասխանել։ Իմ եղբայրները չկարացան հավատալ իմ ասածներին և ասացին իմ քրոջը. «Չպետք է հավատ ընծայել այս մարդու ասածներին, նա այս ու այն կողմերում լսել է, թե մենք եղբայր ենք կորցրել և եկել է մեզ ասելու, թե տեսել է նրան, որպեսզի մի քանի դրամ ստանա, ինչպես շատերն են արել...։

Մյուս օրը (ապրիլի 5-ին) ես իմ եղբորս մոտ էի, որին ասացի, թե՝ Շուտով գնում եմ Ֆրանսիա և եթե նա կամենում է նամակ գրել իր պարոն եղբորը, ես ինձ պատիվ կհամարեմ տանել այն։

Այս բանի վրա նա ինձ ասաց, թե՝ Համոզված է, որ իր եղբայրը կենդանի չէ, որովհետև նրա հայրը ամեն տեղ հարցուփորձ է արել, բայց ոչ մի տեղեկություն չի ստացել։ Եվ եթե դուք կարողանաք նամակ բերել իմ եղբորից, ես ձեզ հինգ հարյուր ոսկի (դուկատ) կտամ, և իմ եղբայրներս դարձյալ այդքան, այնպես որ դուք ձեր ամբողջ կյանքը կանցկացնեք իբրև մի պարկեշտ մարդ։

Սրանից հետո նա ինձ ցույց տվեց մի նամակ՝ թվագրված ութսուն և չորս տարեթվով, որ ես նրան գրել էի Փարիզից։ Ահա ինչպես թաղնվեցա իմ եղբոր մոտ, առանց ինձ ճանաչել տալու։ Մեկնելիս (ապրիլի 6-ին, 1699 թ.) ես թողի անկողնի մեջ մի ժամացույց և մի քանի մեդալներ՝ փաթաթված թղթի մեջ»[28]։

Ըստ Օրու տեղեկության, 1699 թ. ապրիլի 6-ին նա իր հայրենի գյուղից մեկնել է և հասել Անգեղակոթ։ Երևանից դեպի Սիսիան գնացող ճանապարհն անցնում է Վայոց ձորով։ Այդ ուղու վրա որ գյուղն էլ որ վերցնելու լինենք՝ Փաշալու, Գնդևազ, Կեչուտ և այլն, ամենից մոտիկը Մարտիրոսն է. այդ գյուղից ճանապարհն անցնում է նախ դեպի Բազարչայ, հետո՝ Ղալաջղուջ (այժմ ավերակ), ապա՝ մտնում Անգեղակոթ։

Ի դեպ, Գարեգին Հովսեփյանի տեսակետը Օրիի ծննդավայրի մասին, պաշտպանել են պրոֆ. Հ. Հարությունյանը 1945 թ. հրատարակած «Իսրայել Օրի» վերնագրով գիտա-հանրամատչելի գրքույկում[29] և արձակագիր Մ. Այվազյանը «Ճակատագիրն Հայոց» վեպում[30]։

Որ Օրիի ծննդավայրը Մարտիրոս գյուղն է, ապացուցվում է այլ փաստերով ևս, որոնց վրա կուզենայինք կանգ առնել։

Սյունիքի մելիքները Պֆալցի կուրֆյուրստին ուղարկած 1699 թ. ապրիլի 29-ի իրենց գրության մեջ, ցանկանալով ավելի ակնբախ դարձնել Պռոշյանների իշխանական տան ժառանգների բարեմասնությունները, իբրև նվիրված քրիստոնյաների, մատնացույց են արել այդ տան երեք շառավիղների նահատակության փաստը։ Նրանք գրել են. «Ձերդ Կայսրընտիր բարձրությունը իր նամակին մեջ շնորհը կընե պարոն Օրիին, անոր գովեստ ընելով իր լավ կամեցողության, ընտիր եռանդին և խոհեմ վարմունքին, իր ձեռնարկներուն մեջ, շատ ճիշտ է, որ իր առաքինությունը և արժանիքը իր շատ պանծալի ծնունդին, ինչպես նաև տառապանքը և մարտիրոսությունը կպատկանի նույն-

28 Эзов, Сношения, վավ. № 11, էջ 51—52 (հմմտ. Լեո, Հայոց պատմություն, հատ. III, գ. II, էջ 38—39)։

29 Հ. Հարությունյան, Իսրայել Օրի, Երևան, 1945, էջ 43։

30 Սուրեն Այվազյան, Ճակատագիրն Հայոց, Երևան, 1966։

քան նշանավոր իր տան, մենք արդեն տեսած ենք նկատելի կերպով ուժեղ տրված կարծիքը իր մասին[31], բոլորովին արվեստակյալ։ Ասոր համար, շնորհիվ Ձերդ Կայսրընտիր բարձրության, երկու խոսք կըսենք ի նպաստ իրեն, որ մենք տեսած ենք իր շատ նշանավոր տան երեք անդամներուն մարտիրոսացումը՝ կրոնքի համար։ Առաջինը մելիք Մարտին՝ քարկոծելով այրեցին, անհավատէ մը ետ առնելէ վերջ դետին մը և վերադարձնելով քրիստոնյայի մը՝ որուն կպատկաներ. և անմիջապես հետո (երկրին սովորության համաձայն) քրիստոնյաները հիշյալ մելիք Մարտինը սուրբերու կարգ դասեցին։ Երկրորդն էր՝ մելիք Աղաճանը, որ իր պալատին մեջ կտոր կտոր ըրին։ Վերջապես երրորդին՝ Քարախան կոչված՝ գլուխը կտրեցին։ Այս կատաղությունը և սաստիկ բարկությունը դեռ չհանդարտած՝ այս չար մարդիկը նույն ձևով և նույն պատճառով կուզեին սպաննել նաև մելիք Իսրայելը՝ պարոն Օրիի հայրը, սակայն չհաջողեցան իրենց նպատակին հասնել, անոնք թունավորեցին զինքը...»[32]։

Օրիի երեք հարազատների նահատակության փաստը նշվում է նաև մելիքների՝ Պետրոս Մեծին ուղղված 1699 թ. ապրիլի 29-ի դիմումի մեջ. «Դարձեալ իմացնեմք քո ինքնակալ թագաւորիդ, ինչպես որ գրեր ենք ի մէջ թղթին, թէ այս պայծառ տունս պարոն Իսրաէլ Օռին որչափ լի չարչարանք է քաշեր, որ մենք ակներև տեսեալ եմք և ի պատմութիւնս գրեալ կա, որ Դ (երեք) մարդ նահատակեցաւ այս պայծառ տանէն մեր ժամանակաւն վասն քրիստոնէից համար. մենքլ դատաստանաւ տեսինք որ հնոց ի վաղէմէ իշխանաց զարմէ է, քան զամենքեանքս առաւել դերագոյն է ամենայն իրաց»[33]։

Նահատակված այդ երեք անձնավորություններից Martin-ը՝ Մարտիրոսն է, Agajang-ը՝ Աղաջանը, իսկ Garagan-ը՝ կարող է լինի Քարախան կամ աղավաղված մի այլ անուն։

Գարեգին Հովսեփյանը որոնումներ է կատարել Մարտիրոս գյուղի շրջակայքում եղած գերեզմանատներում՝ պարզելու համար, թե չկա՞ն արդյոք այդ նահատակների գերեզմանները։ Եվ նա, Մարտիրոսից ոչ հեռու, Օծոփ (Ածոփ կամ Ռծոփ) կոչվող վանքի արձանագրությունների մեջ գտել է Մարտիրոսի և Աղաջանի անունների հիշատակությունը։

Անհրաժեշտ ենք համարում բերել Օծոփի այդ արձանագրությունները։

Վանքի հարավային դռան ճակատին փորագրված է. «Ես տ[է]ր Ղազարս ի գեղէն Մարտիրոսէն, շինել ետու թումաիզ դուռս ս[ուր]բ Ա[ստայծածնիս վ[աս]ն ծնողաց իմոց պարոն Աղաճանին եւ կենակցին Սիրմարքին եւ եղբօրն իմոյ Վէլիճանին, կողակիցն Փարուն եւ կողակցին իմոյ Մարիանին թվ. ՌՃԻ (=1671)»[34]։

Այդ արձանագրությունից ներքև. «Ես Մարտիրոսեցի պարոն Լալէս ետու հոգոյ հաւրն իմոյ Մարտիրոսին, որ նա ո[ր] (հրատարակության մեջ «նա

31 «Իր մասին» կրկնված է։

32 Эзов, Сношения, վավ. № 4, էջ 12—13։ Օգտվել ենք Քյուրտյանի թարգմանությունից (տե՛ս նշվ. աշխ., էջ 41—42)։

33 Նույն տեղում, վավ. № 6, էջ 19։

34 Գ. Հովսեփյան, Խաղրակյանք կամ Պոռչյանք, էջ 253։ Օծոփի այս և մյուս երկու արձանագրությունները հրատարակել է Ա. Այվազյանը, «Օծոփի և Կուքիի հուշարձանները» հոդվածում (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 2, էջ 257—265)։

ո») ամէն զգործն կատարեաց, եւ մաւրն իմոյ Մուրատսին։ է (=7) թուման տվի ս[ուր]բ Ա[ստա]ծած[նին]»[35]։

Այգ արձանագրության կողքին. «Խաչս [յ]իշա[տա]կ է (հրատարակության մեջ «իշակ է») Լալին եւ կողակցին Կուլիխանին եւ որդոցն Ավդին, Հախնզարին, Մարտսին (=Մարտիրոսին), եւ եղբ[որ]ս իմ պարոն Էլիազին, որ տվաք Դ (=4) թուման ս[ուր]բ եկեղ[եցո]յս թվ. ՌՃԻ (=1671)»[36]։

Եկեղեցու ներսից, հյուսիսային պատին.

«Խ[ա]չս յ[ի]շ[ատա]կ է, խ[ա]չս յ[ի]շ[ատա]կ է, խ[ա]չս յ[ի]շ[ատա]կ է Մուրադին եւ Մուրասին, Էլիաշին, Կուլիխանին, Լալին եւ կողակ[ի]ցն Հօնկլյն (—հանգուցելոյն) Շահզասթումբ, Մարիանին մօրն, Մարտիրոսին ՌՃԻ (=1671)»[37]։

Մատնացույց անելով այդ արձանագրությունները, Գարեգին Հովսեփյանը եզրակացնում է. «Ա՛րդ, այս նահատակ Պռոշյաններից երկուսի անունը և մահվան ժամանակը նույնանում են մեր արձանագրություններից երկուսի հետ՝ «պարոն» Աղաճանի և «պարոն» Մարտիրոսի, մի զուգադիպություն, որ չպիտի վրիպի մեր ուշադրությունից։ Այս հանգամանքը ստիպում է մեզ ճշմարտանման համարել, որ Օրիի հայրենիքը Մարտիրոս գյուղն է, այնտեղի «պարոնները»՝ Պռոշյանների մնացորդներ, որոնց պատկանում է և Օրին»[38]։

Աշ. Հովհաննիսյանը համոզեցուցիչ չի գտնում Հովսեփյանի հայտնած կարծիքը Մարտիրոս գյուղը Օրիի ծննդավայրը լինելու մասին այն պատճառաբանությամբ, որ «...չկա որևէ փաստ, թե մինչև XVII դարը Վայոց ձորում շարունակվում էր Պռոշյանների սերունդը։ Ապա չի երևում, որ շիրիմագրերի Մարտիրոսը կամ Աղաջանը Պռոշյաններ էին, կամ մելիքներ ու նահատակներ։ Կամ որ այդ մարդիկ մահացել էին, ինչպես ասվում է Օրիի անմիջական նախնիների մասին՝ XVII դարի 60—80-ական թվականներին։ *Մելիք Մարտիրոսի մասին Օրիի թղթերում ասված է, թե նահատակվելուց հետո,* «քրիստոնյաները սրբերի շարքը դասեցին նրան», *այսինքն՝ սրբատեղի դարձրին նրա գերեզմանը։ Հովսեփյանի նկարագրությունից* չի երևում նաև, թե Մարտիրոսի անուն կրող շիրմաքարը որևէ նետ ունի նման պաշտամունքի» *(ընդգծումները մերն են—Ա. Ա.)*»[39]։

Նույն առարկությունն արել է նաև Հ. Քյուրտյանը. «Գարեգին Սրբազան Հովսեփյան,— գրել է նա,— իր Պռոշյանց նվիրված աշխատության մեջ կջանա այդ անգո մարտիրոսները նույնացնել Ոծոպի Մարտիրոս գյուղին մեջ գտնված արձանագրության՝ պարոն Աղաճանի և պարոն Մարտիրոսի հետ։ Սովորական այդ անունները նույնացնել պարզապես անոնց նմանության համար, բնական է, անընդունելի է առանց որոշ և վերջնական տվյալներու։ Հովսեփյան Սրբազանի հիշած Մարտիրոսը մեռած կհիշվի անթվական, մինչ Աղաճանը ողջ էր 1671-ին։ Գարագանի մասին ոչ իսկ հիշատակության նշույլ հոն։ Ըստ Օրիի՝ այս նահատակությունները կատարված էին 1699-ի ատեն-

35 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 253—254։
36 Նույն տեղում, էջ 254։
37 Նույն տեղում, էջ 254։
38 Նույն տեղում, էջ 274։
39 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, գ. Բ, էջ 239։

ները։ Ա՛լ ավելի զարմանալի է, որ բացարձականապես ո՛չ մեկ հիշատակություն կա Իսրայել Օրիի հոր՝ Իսրայել Պռոշի մասին, մեռած կամ ողջ...»[40]։

Եթե զուրս հանելու լինենք Օրիի՝ Պռոշյանների ցեղից լինել-չլինելու վիճելի հարցը, ապա Աշ. Հովհաննիսյանի հիմնական առարկությունները կենտրոնանում են երեք հարցի շուրջը. ա) փաստեր չկան, որ Մարտիրոսը մահացած լինի XVII դարի 60—80-ական թթ., բ) չի հիշվում, որ Մարտիրոսը նահատակ է եղել, գ) բացակայում է Մարտիրոսի շիրմաքարը և հիմք չունենք ասելու, թե այն պաշտամունքի առարկա է եղել։ Սրանց վրա պետք է ավելացնել Քյուրտյանի մի այլ առարկությունը, թե Գարագանի և Օրիի հոր մասին տեղեկություններ չկան։

Եթե մեզ հաջողվի նոր տվյալներ բերել խնդրո առարկա հարցի մասին, կարծում ենք, կարելի կլինի Օրիի ծննդավայրի վիճելի հարցը լուծված համարել։

Ուսումնասիրողներից շատերն են խոսել նահատակ Մարտիրոսի մասին, բայց նրանց բոլորի ուշադրությունից վրիպել է Մարտիրոսի շիրմաքարը, որը գտնվում է Մարտիրոս գյուղի արևմտյան կողմում եղած գերեզմանատանը։ Տապանաքարը օրորոցի ձև ունի, վրան կա չորս տողից բաղկացած արձանագրություն, որը հրատարակել է հայ վիմագրության երախտավոր Ս. Բարխուդարյանը։ Այդ արձանագրությունը վերծանված է այսպես.

«Այս է տապան Մարտիրո[ս] նահատակին
Նաեւ Լալ որդ[ոյն] եւ ամինեց[ուն],
Շին[եա]լ շիրիմ իւր ծնողին,
Թվ[ին] Ռճժ մեկին (=1662-ին),
Տ[է]ր Կ[ի]ր[ա]կ[ո]ս կ[ա]զմող սորին»[41]։



Ինչպես տեսնում ենք, արձանագրությունը պատասխանում է վիճելի հարցերին։ Պահանջվում էր, որ Մարտիրոսը շիրմաքար ունենար, ահա և նրա շիրմաքարը։ Պահանջվում էր, որ շիրմաքարը թվական ունենա, ահա և թվականը՝ 1662, որը լիովին համապատասխանում է Օրիի մատնացույց արած ժամանակին։ Պահանջվում էր, որ շիրմաքարի վրա անպայման հիշվեր Մար-

40 Հ. Քյուրտյան, նշվ. աշխ., էջ 23—24։
41 «Դիվան հայ վիմագրության, պրակ III, էջ 190։

տիրոսի նահատակ լինելու փաստը, որը և կատարված է՝ «Մարտիրոս նահատակ»։

Ինչպես երևում է, Գ. Հովսեփյանն Օրիի երեք հարազատների հարցում ընկել է ճիշտ հետքի վրա. Օձոփի վանքի վրա եղած երեք արձանագրություններն էլ կապված են նահատակ Մարտիրոսի և Աղաջանի անունների հետ։ Երկրորդ արձանագրության մեջ հիշված Լալեն, որն իրեն Մարտիրոս գյուղից է համարում, Մարտիրոսի որդին է («Ես Մարտիրոսցի պարոն Լալէս ետո[ւ] հոդոյ իմոյ Մարտիրոսին...»)։ Ուշագրավ է, որ տվյալ արձանագրության մեջ և՛ Աղաջանը, և՛ Մարտիրոսի որդին հիշված են իբրև «պարոններ», իսկ Մարտիրոսի համար նշվում է նաև, թե «գործն կատարեաց»։ Խիստ հավանական է, որ «գործի կատարման» այդ ակնարկը անձնական, մասնակի գործի չի կարող վերաբերել, այլ՝ հասարակական կարևոր ինչ-որ ձեռնարկի, իսկ թե ի՞նչ հասարակական գործ կարող էր լինել, այդ մենք գիտենք Օրիի հաղորդած տեղեկությունից։

Անբացատրելի էր մնացել Օրիի հաղորդած Garagan անսովոր անունը, որը չի հիշվում ո՛չ Օձոփի, և ո՛չ էլ Մարտիրոսի գերեզմանատանը եղած շիրմաքարի վրա։ Լեոն կարծում է, որ այդ անունը եղած կլինի Կարախան[42]։

Մարտիրոսից ոչ հեռու, Հորատիս գյուղից երեք կիլոմետր հեռավորության վրա, կա մի ավերակ եկեղեցի, որի մուտքի մոտ փորագրված է հետևյալ արձանագրությունը.

«Շինեցի զեկեղեցիս թվ. ՌՃԻԸ (=1679)։
Ես տ[է]ր Վարդանի որդի տ[է]ր Կիրակոս գրեցի։
Խաչս Յիշ[ատակ է] խաչն՝ տէր Աղաղարին մօրն»[43]։

Մեր կարծիքով արձանագրող Կիրակոսը՝ Մարտիրոս նահատակի շիրմաքարի մեջ հիշվող Կիրակոսն է. այնտեղ ասել է. «Տէր Կիրակոս կաղմող սորին», իսկ այստեղ՝ «Տէր Կիրակոս գրեցի»։ Անհավանական չէ, որ այստեղ հիշվող «տէր Աղաղարը» լինի Օրիի հիշած «Garagan»-ը՝ «աղա» բառը, «Ղարա»-ից առաջ օգտագործած, թեև այդ անվիճելի չենք համարում։

Օրիի ծննդավայրի կապակցությամբ մնում է լուծել մի առեղծված ևս։ Պֆալցի կուրֆյուրստին 1699 թ. սեպտեմբերի 22-ին Օրիի ներկայացրած զեկուցագրից երևում է, որ նրա ծննդավայրի շրջանը գտնվել է Նախիջևանի խանի գերիշխանության տակ. «Նախիջևան քաղաքը,— գրել է նա,— ուր մի խան կա, որ իր հետ ունի հարյուր մարդ, որովհետև նա թագավորության գլխավոր զորապետն է, և նա է, որ տիրում է մեր նահանգին (ընդգծումը մերն է—Ա. Ա.), և որ մահացու թշնամի է մեր ընտանիքին և ուրիշ քրիստոնյա իշխաններին, որոնց շատ անգթաբար սպանել է տալիս»[44]։

Եթե օտարերկրացի հեղինակները կարող էին Հայաստանի մի շրջանը շփոթել մյուսի հետ՝ հավաստի տեղեկություններ չունենալով Օրիի ծննդավայրի մասին, ապա նման շփոթություն չէր կարող լինել իր՝ Օրիի մոտ. անկարելի է, որ նա այդ հարցում սխալ թույլ տար։

---

42 Լեո. Հայոց պատմություն, հատ. III, գ. II, էջ 21։
43 Հրատարակվում է առաջին անգամ։
44 Эзов. Сношения. վավ. № 9, էջ 33։

Հարց է առաջանում, եթե Օրիի ծննդավայրը գտնվել է Նախիջևանի խանության մեջ, ապա այդ կարծիքը հակասության մեջ չի՞ մտնում արդյոք Օրիի հայրենիքը Վայոց ձորն ընդունելու իրողության հետ։ Մեզ թվում է, որ ոչ, քանի որ XVII դարում Վայոց ձորը, իրոք, մտնում էր Նախիջևանի խանության կազմի մեջ։ Ավելորդ համարելով բերել մատենագրական կողմնակի տվյալներ, բավականանանք միայն մատնացույց անելով 1765 թ. Էջմիածնում պաշտոնապես կազմված թեմերի ցուցակը, ուր Վայոց ձորը տեղադրված է Նախիջևանի խանության մեջ։ Ըստ այդ ցուցակի, Նախիջևանի խանության մեջ մտել են. Աստապատը, Շահկերտը, Շոռոթը, Ղազանչին, Գաղը, Նորաշինիկը, Շրխմահմուդը, Քուլթափը, Ածոպը (=Օծոփը), Ագուլիսը, Դաշտը, Ցղնան, Շամբը, Արարքը, Ջաղացտեղը, Ազատակը, Եղեգնաձորը, Վայոց ձորը և Օրդուվարը[45]։ Ըստ որում, Ղափանը և Սիսիանը, ըստ այդ ցուցակի, այլ թեմերի մեջ են մտած եղել։ Իրավացի է Աշ. Հովհաննիսյանը, երբ վիճելով Ի. Պետրուշևսկու հետ, հակառակ նրա հայտնած կարծիքի, գտնում է, որ «Շարուր-Դարալագյազը Նախիջևանի (բայց ոչ Ղարաբաղի) խանության մեջ էին ոչ միայն Թահմազի ժամանակ, այլև ավելի ուշ՝ XVII դարում»[46]։

Համեմատաբար դյուրին է լուծվում Օրիի ծննդյան թվականը։ Ըստ վավերագրական տվյալների, Էջմիածնի գաղտնի ժողովի ընտրած պատգամավորության Պոլիս մեկնած տարում Օրին եղել է քսան տարեկան[47]։ Օրին Արևմտյան Եվրոպա է մեկնել 1679 թ., հետևապես նա ծնված պիտի լինի 1659—1660 թթ.։ Օրին, ըստ տեղեկությունների, մահացել է 1711 թ. 51 տարեկան հասակում։ Այս հաշվով ևս Օրիի ծնունդը ընկնում է 1659—1660 թթ.։

Քյուրտյանը հենվել է Հեյգելի հաղորդած այն տեղեկության վրա, ըստ որի Օրին 1689 թ. իբրև թե քառասուն տարեկան է եղել, հետևապես ենթադրում է, որ Օրին պետք է ծնված լինի 1649 թ.[48], այլ խոսքով՝ տաս տարի ավելի վաղ, քան ընդունված է պատմագիտության մեջ։ Հ. Քյուրտյանը, ինչպես մի կապակցությամբ նշել է Աշ. Հովհաննիսյանը, Հեյգելի բնագիրն անձամբ չի տեսել, այնտեղ նշված է ոչ թե 1689 թ., այլ՝ 1698-ը. տեղի է ունեցել միավոր 9-ի և տասնավոր 8-ի տեղաշարժ։

Կարծում ենք, որ հայագիտության մեջ բավարար լուծում է տրվել Օրի անվան գործածությանը, որը հայկական ձև չունի։ Գոյություն ունեցող այն կարծիքը, թե Եվրոպա ընկած հայ մարդիկ հաճախ քմահաճ ձևով ազգանուն փոխելու սովորություն են ունեցել, և նման ուղիով է ընթացել նաև Օրին, ճիշտ համարել չի կարելի։ Ըստ Հ. Աճառյանի հայտնած կարծիքի Օրի անունը առաջացել է հայկական Ավրի կամ Եավրի անձնանունից[49], որը ֆրանսերեն տառադարձությամբ դարձել է Օրի. «Թե իսկապես Իսրայելի որդի Եավրին կամ «Ավրին» Ֆրանսիայում էր դարձել «Իսրայել Օրի»,— գրել է Աշ. Հովհաննիսյանը,— դրանում հեշտ է համոզվել, եթե նկատենք, որ Օրին ստո-

45 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 9120, թ. 3ա, հմմտ. Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, գ. Բ, էջ 236—237։

46 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, գ. Բ, էջ 237։

47 Эзов, Сношения, վավ. № 11, էջ 51։

48 Հ. Քյուրտյան, նշվ. աշխ., էջ 21—22։

49 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Բ, էջ 304։

բագրում է իր անունը միայն «Օռի» ձևով, մատնելով հին ֆրանսերենի «ռ» հնչյունի արտասանության հետքը։ Չպիտի, ի դեպ, տարօրինակ թվա, որ Իսրայել Օրի անվան մեջ հայրանունն անձնանունից առաջ է գրված. նույն այդ ձևով Օրիի թղթերում հանդիպող «Եաւրի որդի Աղաջանը» թարգմանված տպագրված է ֆրանսերենում «Jauri Agadjan» ձևով»[50]։

Հիմք չունենք կարծելու, որ Օրին իր հայրենի գյուղում կարող էր ստացած լիներ կանոնավոր կրթություն։ Սակայն աչքաբաց երիտասարդը Եվրոպայում իր թափառումների տարիներին կարողացել է տիրապետել եվրոպական մի քանի լեզուների՝ ֆրանսերենի, գերմաներենի, իտալերենի, լատիներենի, ինչպես և՝ նրանց գրությանը։ Այն փաստարկը, որ եվրոպական լեզուներով գրված և մեզ հասած վավերագրերը գրված չեն Օրիի ձեռքով, դեռևս ապացույց չէ, որ նա չէր տիրապետում այդ լեզուների գրությանը, որովհետև նշված թղթերը գրված են Օրիի քարտուղարների կողմից, բայց հայտնի է, որ այդ գրությունները քարտուղարները կազմել են Օրիի թելադրությամբ։ Եվրոպական և ռուսական արքունիքներում վարած դիվանագիտական բանակցությունների ընթացքում Օրիի ցուցաբերած նիստուկացի կիրթ ձևերը, խոսելու, տրամաբանելու բարձր կարողությունը անհերքելի ապացույց են նրա բարձր կուլտուրայի։

Օրին Ֆրանսիայում ամուսնացած է եղել և ունեցել է երեխաներ։ Դրժբախտաբար նրա ընտանիքի մասին կցկտուր տեղեկություններ են հայտնի մեզ։ Ըստ Կրուշինսկու տեղեկության, Օրին ամուսնացած է եղել Ֆրանսիայում նախքան զինվորական ծառայության մտնելը, իսկ այդ եղած պիտի լինի XVII դարի 80-ական թթ.։ Օրին իր ընտանիքի մասին տեղեկություն է հայտնել 1703 թ. նոյեմբերի 15-ին կանցլեր Ֆ. Ա. Գոլովինին ներկայացրած գրության մեջ. նա խնդրել է թույլ տրվի իրեն Արևմտյան Եվրոպա մեկնել երկու նպատակով՝ դեպի Հայաստան նախատեսվող արշավանքի կապակցությամբ բանակցություններ վարելու Լեոպոլդ կայսեր և Պֆալցի կուրֆյուրստի հետ և ապա տեսակցելու իր ընտանիքի հետ։ Նա նշել է, որ մտադիր է իր երեխաներին բերել իր հետ ռուսական կրթության տալու նպատակով[51]։

Օրին ընտանիքի մասին հիշատակություն ունի նաև 1704 թ. սկզբներին Պֆալցի կուրֆյուրստին Մոսկվայից գրած նամակում. խոսելով իր նյութական դժվարությունների մասին, նա նշել է նաև ընտանիքի ծանր վիճակը. «Ուղիղ յոթ տարի է (1698—1704),— գրել է նա,— աշխատել եմ և անդադար ճանապարհորդել։ Այդ ընթացքում ես աներևակայելի նեղություններ եմ կրել, ունեցվածքս վաճառել եմ, իմ խեղճ զավակներիս ոչինչ չեմ թողել (ընդգծումը մերն է—Ա. Ա.) և պարտքի տակ եմ ընկել»[52]։

Ցարական արքունիքից արտասահման գնալու թույլտվություն ստանալուց հետո 1704 թ. փետրվարի 2-ին Օրին դիմել է կանցլեր Ֆ. Ա. Գոլովինին և պատրաստակամություն է հայտնել իր հետ տանել ֆրանսերեն լեզու ուսումնասիրելու համար Ռուսաստանից արտասահման ուղարկվող գրագիրներին և խոստացել նրանց տեղավորել այն դպրոցում, ուր իր երեխաներն

50 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, գ. Բ, էջ 270։
51 Эзов, Сношения, վավ. № 109, էջ 176։
52 Նույն տեղում, վավ. № 120, էջ 193։

են սովորում և վերադարձին սեփական ծախսով նրանց ետ բերել[53]։ Օրիի այս տեղեկությունից երևում է, որ նրա երեխաները դպրոցական տարիք են ունեցել։

1706 թ., երբ Օրին վերադարձել է արտասահմանյան գործուղումից և պատրաստվել մեկնելու Պարսկաստան, հոկտեմբերի 29-ի խնդրագրում կրկին անդրադարձել է իր ընտանիքն արտասահմանից Ռուսաստան տեղափոխելու խնդրին։ Նա գրել է. «Ես չեմ կարողացել իմ ուղեբեռը բերել Լեհաստանի վրայով և հարկադրված եմ եղել թողնել Հռոմեական կայսրության մեջ (այսինքն՝ Ավստրիայում—Ա. Ա.), իսկ այժմ մտադիր չեմ գնալ այնտեղ և այժմ Ձերդ ցարական Մեծության ողորմածությանն եմ ապավինում, որպեսզի իմ ունեցվածքը այստեղ բերեմ, ցանկանում եմ նաև երեխաներիս փոխադրել Ձերդ Մեծության երկիրը»[54]։

Դժբախտաբար, հակասական են տեղեկությունները Օրիի ընտանիքի բնակության վայրի մասին։ Ըստ Օրիի մի տեղեկության, ինչպես և Մինաս վարդապետի վերը հիշված զեկուցագրի, նրա ընտանիքի բնակավայրն է եղել Պֆալցի Դյուսելդորֆ քաղաքը։ Կանցլեր Գոլովինին ուղարկած 1704 թ. փետրվարի 2-ի դիմումից հետևում է, որ Օրիի ընտանիքը պիտի գտնված լիներ Ֆրանսիայում։ Ըստ 1707 թ. փետրվարի 28-ին Պետրոս Մեծին Օրիի հղած գրության, նրա ընտանիքը գտնվել է Քյոլն քաղաքում[55]։ Կրուշինսկին հայտնում է, որ Օրիի ընտանիքը եղել է Բրյուսել քաղաքում. «Անձամբ տեսել եմ Աստրախանում մի նամակ, որ Բրյուսելից գրել էր նրա որդին»[56]։

Երբ Մոսկվա եկող հայ առևտրականները լուր հասցրին Մինաս վարդապետին, որ Օրին մահացել է, նրա գույքը բռնագրավվել և կողոպուտի է ենթարկվում, նա 1711 թ. նոյեմբերի 26-ին զեկուցագիր է ներկայացրել ցարական արքունիքի Դեսպանական վարչությանը և խնդրել թույլ տալ իրեն Աստրախան մեկնել՝ Օրիի գույքին տիրություն անելու և կողոպուտից փրկելու համար։ Նա ցանկացել է Օրիի մնացած գույքով նրա պարտքերը փակել. նրա անպաշտպան մնացած ծառայողներին նյութական օգնություն հասցնել, իսկ մնացածը հանձնել ժառանգորդներին՝ կնոջը և երեխաներին, որոնք, ըստ նրա խոսքի, ապրում են Հռենոսյան Պալատինի երկրամասում, Դյուսելդորֆ քաղաքում[57]։

Կրուշինսկու մի տեղեկությունից երևում է, որ Մինաս վարդապետին թույլ են տվել գնալ Աստրախան, և նա այնտեղ կարողացել է կողոպուտից փրկել Օրիի անձնական իրերը և հանձնել նրա զավակներին. «Մինաս վարդապետը, ինձ հետ լավածանոթ Մոսկվայից և լավ կաթոլիկ...»,— գրել է Կրուշինսկին,— և Օրիի մահից հետո նրա գլխավոր կտակակատարը, հանգուցյալ Պետր Ալեքսեևիչի շնորհիվ կարողացավ ետ ստանալ Օրիի զավակի օգտին նրա անձնական իրերը, որոնք բռնագրավվել էին՝ համարելով պետական գանձարանի սեփականություն»[58]։

53 Ա. Գ. Աբրահամյան, Իսրայել Օրու և Մինաս վարդապետի նորահայտ վավերագրերը, «Էջմիածին», 1950, № 11—12, էջ 72։

54 Эзов, վավ. № 142, էջ 224։

55 Նույն տեղում, վավ. № 144, էջ 225։

56 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, գ. Բ, էջ 592։

57 Эзов, վավ. № 183, էջ 284։

58 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, գ. Բ, էջ 620։

Ովքե՞ր են եղել Օրիի զավակները և ի՞նչ եղան նրանք իրենց հոր մահվանից հետո, այդ մասին մեզ ոչինչ հայտնի չէ։ Ըստ բուլղարահայ մտավորական Տ. Մարտիրոսյանի տեղեկության, Օրի ազգանունով տասնյակ ընտանիքներ են եղել Գերմանիայում և ունեցել են բարձր դիրք. «Կըսվի թե Գերմանիո մեջ տասնյակ մը ընտանիքներ կան Օրի ազգանունով,— գրել է նա,— որոնք աչքառու դիրքեր կգրավեն առևտրական և ազատական ասպարեզներու մեջ։ Ասիկա կբացատրվի անով, որ Իսրայել Օրիի մահվան թվականին, 1711-ին, անոր կինը (հավանական է գերմանուհի մը, ինչպես էր Խաչատուր Աբովյանի կինը) իր երկու զավակներով կբնակվեր Գերմանիո Հոհենցոլյան գավառների՝ Տյուսիլտորֆ քաղաքին մեջ։ Անոր սերունդեն առաջ եկած պիտի ըլլան Գերմանիո մեջ ապրող Օրի ազգանունով այդ ընտանիքները»[59]։

МЕСТО РОЖДЕНИЯ, ВОЗРАСТ И СЕМЬЯ ИСРАЭЛА ОРИ

Проф. А. Г. АБРАМЯН

(Резюме)

Исраэл Ори—один из видных деятелей освободительного движения армянского народа. Он первым смело пересмотрел политическую ориентацию армянского освободительного движения и связал его надежды и чаяния с русским народом; Ори—фактически первый армянский дипломат, который вел переговоры с Петром I и заложил юридическую основу армяно-русских политических сношений.

В армянской историографии еще окончательно не выяснено место рождения Ори. Наиболее вероятным считается мнение видного арменоведа Гарегина Овсепяна, который на основании ряда фактов утверждал, что Ори родился в селе Мартирос в армянском историческом районе Вайоц-дзор (ныне Азизбековский р-н АрмССР). В статье приводятся факты, доказывающие справедливость этого утверждения. Рассматриваются также сведения, касающиеся возраста Ори и состава его семейства.

59 Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հատ. III, գ. II, ծանոթագրություններ, ծան. 14։